

Ժամանակ

Ժամացույցի վրա թայմեր ենք դրել այնպես, որ նշված ժամանակն անցնելուց հետո ժամացույցը զանգի: Պահանջվում է գրել ծրագիր, որը պարզի, թե ինչ ժամանակ է ցույց տալու ժամացույցը զանգի պահին:

Մուտքը

Առաջին տողում տրված է ընթացիկ ժամանակը HH:MM:SS ֆորմատով, այսինքն սկզբում ժամն է, հետո րոպեն, վերջում վայրկյանը (երկու նիշ ապահովելու համար զրոները պարտադիր կլինեն): Ընդ որում ժամը տրված է 00-ից 23 սահմաններից, իսկ րոպեն և վայրկյանը կարող են լինել 00-ից մինչև 59:

Երկրորդ տողում տրված է ժամանակի ինտերվալը, որ պետք է անցնի մինչև զանգը: Այն տրված է H:M:S ֆորմատով, որտեղ $0 \leq H, M, S \leq 10^9$, և սկզբում ավելորդ զրոներ չկան: Մասնավորապես, եթե H=0, ապա այն կարող է չգրվել, իսկ եթե H=0 և M=0, ապա նրանք երկուսն էլ կարող են բաց թողնվել:

Ելքը

Ելքում արտածելք HH:MM:SS ֆորմատով այն ժամանակը, երբ զանգը կհնչի:

Օրինակներ

Մուտքը.

01:02:03

48:0:0

Ելքը.

01:02:03

Մուտքը.

23:59:59

1

Ելքը.

00:00:00